Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ «ԸՆՏԱՆԻՔ, ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ» ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

(12 սեպտեմբերի, 2014 թ.)

Հայրապետական սիրով ողջունում եւ Մեր օրհնությունն ենք բերում «Ընտանիք, հասարակություն եւ Եկեղեցի» համաժողովի մասնակիցներին: Գնահատանքով ենք անդրադառնում, որ ժողովը նպատակ ունի եւս մեկ անգամ կարեւորությամբ անդրադարձ կատարելու եւ վեր հանելու ընտանիքի դերն ու նշանակությունը հասարակական մեր կյանքում, ինչպես նաեւ՝ որոշակի շեշտադրումներ կատարելու այսօր ընտանեկան կյանքում առկա անցանկալի երեւույթներին:

Հայ Եկեղեցին մշտապես բարձր է գնահատել ընտանիքի ամբողջականությունը, սրբությունը եւ անքննարկելի կարեւորությունը մեր ժողովրդի կյանքում՝ դիտելով որպես հոգեւոր եւ բարոյական արժեքների պահպանման հիմնասյուն եւ անփոխարինելի հաստատություն հանրային առողջ գիտակցության ձեւավորման ու զարգացման համար: Ընտանիքի այսպիսի հասկացողության հիմքը Սուրբ Ընտանիքն է, որը հիմնված է սիրո, բարության, ազատության, խնամքի, գթասրտության, հարգանքի անփոխարինելի արժեքների վրա:

Մեր օրերում, արագընթաց փոփոխությունների, նաեւ արժեքների անտեսման պայմաններում, ընտանիքի ավանդական ընկալմանը հակադրվում են ծնունդ առնող տարաբնույթ գաղափարախոսական եւ հասարակական հոսանքները, կենսատեխնոլոգիական միջոցների առաջադրած մարտահրավերները, որոնք թափանցում են մարդու կյանքի նվիրական ոլորտը՝ հատկապես որդեծնության հարցերում: Երեւելի եւ աներեւույթ զանազան հարձակումներից, ցավոք, անմասն չի մնացել եւ չի մնում նաեւ հայ ընտանիքը: Այս առումով մտահոգիչ են ամուսնալուծությունների, հղիության՝ ոչ քիչ դեպքերում սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների աճը, ծնելիության նվազումը, կանխատեսվող ժողովրդագրական անցանկալի փոփոխությունները, որոնք մասնավորաբար պետք է քննարկվեն համաժողովում:

Այսօր անհրաժեշտ է դարձել բոլոր մակարդակներում եւ հարթակներում, նմանատիպ համաժողովներով, եկեղեցական քարոզչությամբ, մեծ եւ փոքր քննարկումներով, ընտանիքի աջակցության ծրագրերով, հանրային կյանքի իրագեկման հնարավոր եղանակներով, պետական-օրենսդրական նախաձեռնություններով նպաստել ընտանիքի առողջությանը, բարձրացնել հանրային գիտակցությունը:

Այս առումով մեկ անգամ եւս կարեւորելով համաժողովի նախաձեռնությունը՝ Հայրապետական Մեր գնահատանքն ենք բերում Մայր Աթոռի Հայեցակարգային հարցերի գրասենյակի տնօրեն Գերաշնորհ Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանյանին համաժողովի կազմակերպման համար, ինչպես նաեւ՝ բարձրորեն գնահատում ենք համագործակցության եւ աջակցության ջանքերը ԱԺ առողջապահության, մայրության եւ մանկության հարցերի հանձնաժողովի, ՀՀ առողջապահության նախարարության, «World Vision» հայաստանյան գրասենյակի, ՄԱԿ-ի Բնակչության եւ ԵՀԽ «Կլոր սեղան» հիմնադրամների: Մեր գնահատանքն ենք բերում համաժողովի բոլոր մասնակիցներին, զեկուցողներին, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ մաղթելով արդյունավետ քննարկումներ, որոնք, լիահույս ենք, պիտի նպաստեն ընտանիքների ամրապնդմանը եւ բարոյական արժեքների ամրակայմանը մեր կյանքից ներս:

Մեր Տեր Յիսուս Քրիստոսի սերը, խաղաղությունն ու շնորհները թող լինեն մեզ եւ ամենքի հետ. ամեն: